

20 նոյեմբերի 2001 թ.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ 213

### **Կարգավորումը մոտ ապագայի խնդիր չէ**

«Եթե մեծ տերություններն անգամ համաձայնության գան, իսկ հայկական և ադրբեջանական կողմերը չհամարձակվեն, միևնույն է, հակամարտությունը չի լուծվի:

Եթե հակամարտությունը փորձեն լուծել մեր շահերը ոտնահարելու հաշին, ապա դիմադրություն պարտադիր լինելու է, անկախ նրանից, թե ինչ ուժեր են կանգնում քո դեմ: Եկեք չմոռանանք, որ դրված է ոչ թե զուտ Ղարաբաղի կարգավիճակի հարցը, այլ, ըստ էության, Հայաստանի լինել-չլինելու խնդիրը: Ուստիև Հայաստանը պետք է պնդի, որ զիջումները չեն կարող լինել հայկական կողմի անվտանգության մակարդակի իջեցման հաշվին: Զիջումներ ընդհանրապես կարող են լինել, սակայն դրանք պետք է անվտանգության բնագավառում փոխհատուցվեն այնպես, որ հայկական կողմին՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմական անվտանգության մակարդակն այսօրվա նիշից մեկ միլիմետր ներքև չիջնի»,- «Հայոց Ախարիի» թղթակցին ասաց Արմեն Այվազյանը:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ 213

Կարգավորումը մոտ ապագայի խնդիր չէ

Արմեն Հակոբյան

*Հարցազրույց պատմաբան-քաղաքագետ Արմեն Այվազյանի հետ*

**-ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին այցելության ժամանակ ներկայացված առաջարկությունները որքանով են նոր:**

-Ղատելով մամուլում հրապարակված տեղեկատվությունից, առաջարկությունների բովանդակությունը մնացել է նույնը, ինչ Քի Ուեսթում և Փարիզում: Հետևաբար միայն պայմանականորեն կարելի է խոսել Մինսկի խմբի համանախագահների նոր առաջարկությունների մասին: Ասենք քիուեսթյան կամ փարիզյան սկզբունքների մասին էլ, մեզ դարձյալ քիչ բան է հայտնի: Գիտենք միայն մեր կողմի հայտարարությունները, որ Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը պետք է միջազգային երաշխիքներ ունենա և գիտենք, որ Ղարաբաղը պետք է Հայաստանի հետ ունենա ցամաքային կապ: Միջնորդների առաջարկությունները նախատեսում են մի կարևոր հանգամանք, որը մեզ համար կարող է բավական ցավալի հետևանքներ ունենալ, եթե չերաշխավորվի Հայաստանի և Ղարաբաղի անվտանգությունը: Ո՞րն է այդ հանգամանքը: Միջնորդների ներկայացրած բոլոր առաջարկությունները նախատեսում են հայկական զորքերի հետքաշում ազատագրված տարածքներից:

Պետք է վերհիշել, թե ինչու են այդ տարածքներն առհասարակ գրավվել: Իսկ այդ տարածքները մեզ համար առաջին հերթին անվտանգության երաշխիքներ են: Եվ եթե զիջում ենք այդ տարածքները նորից Ադրբեջանին, ապա ամենակարևոր խնդիրն այն է, որ այդպիսով իջեցնելու ենք մեր անվտանգության մակարդակը: Բայց ի՞նչ ենք ստանալու դրա դիմաց: Սա

ամենակարևոր հարցն է Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման համար: Եվ այդ հարցի պատասխանը մինչ օրս չունենք:

**-Այդ հարցի պատասխանը չունեն նաև միջնորդները:**

-Մենք չգիտենք. ունե՞ն, թե՞ չունեն:

Նախկինում անվտանգության փոխհատուցման մի եղանակ էր դիտվում՝ բազմազգ խաղաղարար ուժերի տեղակայումը հայկական և ադրբեջանական զորքերի միջև: Եթե այդ եղանակը դեռ մնում է միջնորդների ծրագրում, ապա որքա՞ն է լինելու խաղաղարար ուժերի թվակազմը, ո՞ր երկիրն ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ է դրանց մասնակցելու, հրամանատարության ինչպիսի՞ կառուցվածք են ունենալու, ինչպիսի՞ն են լինելու այդ ուժերի տեղակայման մանդատը և ժամկետը: Սրանք չափազանց կարևոր հարցեր են, որովհետև ամենաչնչին տեխնիկական համարվող կետը կարող է մեզ համար ճակատագրական լինել: Մենք ենք զիջող կողմը լինելու և մեր անվտանգության մակարդակն է իջեցվելու:

Երբ ֆրանսիացի և ԱՄՆ համանախագահները եկել էին Չայաստանի ամերիկյան համալսարան՝ ուսանողների և դասախոսների հետ հանդիպելու, այդ հարցերն ուղղեցի նրանց: Պատասխանեցին, որ խաղաղարար ուժերի տեղակայումն անգամ որոշված չէ և իրենք դեռ տեխնիկական բնույթի այդ հարցերի մեջ շատ չեն խորացել, այլ աշխատում են քաղաքական մեծ պայմանագրի վրա: Այնինչ, կրկնում են, այս դեպքում տեխնիկական բնույթի համարվող հարցերն ունեն ճիշտ նույն նշանակությունը, ինչ, ասենք, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը:

Այս ամենից հետևում է, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը մոտ ապագայի խնդիր չէ: Եվ պետք է պատրաստ լինենք, որ սառեցված կարգավիճակով հակամարտությունը կարող է շարունակվել դեռ երկար տարիներ, գուցեև տասնամյակներ:

**-Իսկ ինչո՞վ կարելի է բացատրել Ադրբեջանից շարունակ հնչող ռազմատենչ հայտարարությունները:**

-Մեզանում երկու բացատրություն է բերվում. այդ հայտարարությունների նպատակը Չայաստանի վրա ճնշում գործադրելն է, մյուսը, թե դրանք ներքին սպառնալից համար են, հասցեագրված են իրենց ընդդիմությանը: Այդ երկու բացատրություններն էլ կարող են ճշմարիտ լինել: Բայց ինձ թվում է, որ դրանցից կարևոր հանգամանք էլ կա. Ադրբեջանի իշխանությունները մշտապես իրենց ժողովրդին հոգեբանորեն, գաղափարապես պատրաստում են պատերազմի: Այսինքն՝ Ադրբեջանում չեն հրաժարվել խնդրի ռազմական լուծումից, ավելին՝ փայփայում են հենց այդ տարբերակը:

Ադրբեջանից հնչող այդ հայտարարություններին մեզանում հակադարձում են, ասելով՝ դրանք անլուրջ բաներ են, պատերազմ չի լինի, իսկ եթե լինի էլ, առաջին իսկ ճակատամարտում կջախջախենք նրանց: Սա այնքան էլ ճիշտ դիրքորոշում չէ, պետք է խնդրին ավելի լուրջ մոտենալ և ոչ թե թմրեցնել ժողովրդի զգոնությունը: Հակառակը՝ պետք է մեծ աշխատանք տանել ռազմահայրենասիրական բնագավառում, որը Չայաստանում այսօր շատ է կաղում: